№ 54 Կիրակի 13 սեպտեմբերի

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
1915

Կիրակի 13 սեպտեմբերի № 54

ՓԱՅԼԱԿ

Քաղաքական, հասարակական ու գրական լրագիր

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԿԻՐԱԿԻ ԵՒ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

Տարեկան գինը — 3 րուբլի, ½ տարուանը — 1 ր. 50 կ., 1 ամս. — 35 կ.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին՝ առաջին երեսի վրայ — 20 կոպ, վերջին „ „ — 10 „

Հասցէն՝ Шуша, Редакція газеты „Пайлакъ". Ганджунцев. ул. домъ Костандова. Schoucha, rédaction du journal „Phaïlak".

ՆԱՏԱԼԻԱ ԹԱԴԷՈՍԵԱՆԸ ցաւօք սրտի յայտնում է բարեկամներին և ծանօթներին իր թանգագին ամուսնու

ԿՈՍՏԻ ԹԱԴԷՈՍԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ երեքշաբթի երեկոյեան ժամը 9-ին։ Հանգուցեալի մարմնի յուղարկաւորութիւնը կը կայանայ այսօր առաւօտեան ժամը 10-ին իւր բնակարանից Կազարմսի փողոց, տուն Բէգլար Ղազարեանի, դէպի Ղազանչեցոց եկեղեցին։ Թաղումը կը լինի վերին հանգստարանում։

ԼՈՒՐՋ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Պետական Դումայի ժամանակաւոր փակումը չէր կարող խորը տպաւորութիւն չթողնել ռուս հասարակութեան վրայ։ Մանաւանդ որ դա կատարեց մի այնպիսի մոմենտում, երբ առաւելապէս զգալի էր ժողովրդի ներկայացուցիչների ձայնը, նրանց կոչը և յորդորը ժողովրդին՝ լարելու ամենավերջին ուժերը յանուն հայրենիքի պաշտպանութեան։ Բոլէի լրջութիւնը մեծ պարտականութիւնների առջև էր կանգնեցրել Դումային և մինչ նա ամեն հնարաւոր միջոցներ էր ձեռնարկում կատարելու այդ ծանր պարտականութիւնները, պարզերես դուրս գալու իր վրայ վերցրած պատասխանատուութեան տակից, կառավարութիւնն ընդհատեց նրա աշխատանքները՝ պատճառաբանելով, որ Դուման վերջացրել է արդէն իր կազմակերպիչ աշխատանքը, այլ ևս գործ չունի անելու և որ նրա հետագայ գործունէութիւնը ջղայնացնում է երկիրը։ Այդ ակտով կառավարութիւնը իր վրայ վերցրեց լռելեան կերպով Դումայի գործունէութեան շարունակութիւնը, հետևապէս նրան բաժին ընկած պատասխանատուութիւնը երկրի առաջ։ Կառավարութիւնն այդպիսով ընդառաջ գնաց Դումայի, առանձնապէս առաջադէմ բլօկի, հակառակորդների — «սև բլօկի» ցանկութեան։ Սակայն այդքանով չէր սահմանափակւում «սև բլօկի» ցանկութիւնը, նա աւելին էր սպասում Դումայի փակումից. նա սպասում էր ականատես լինելու զանազան էկսցեսների և համապատասխան հակահարուածի կառավարութեան կողմից։ Բայց ի ցաւ «սև բլօկի» Դուման ցոյց տւեց, որ շատ աւելի լաւ է ըմբռնում մոմենտի լրջութիւնը, դրութեան փափկութիւնը, որ գիտէ իր քայլերին ժամանակի համապատասխան ուղղութիւն տալ։ Հեռատեսութեամբ գիտակցելով հայրենիքին սպառնացող մեծ վտանգը՝ Դուման խոհեմ լռութեամբ լսեց իր արձակման վճիռը և հենց դրանով փառաւոր յաղթանակ տարաւ ընդդէմ իր հակառակորդների։ Դումայի յանուն համապետական շահերի բռնած խելացի վերաբերմունքը առանց գնահատութեան չէր կարող մնալ հասարակութեան կողմից և ռուս ողջախոհ մամուլը միաձայն գոհ սրտով արձանագրեց այս փառաւոր ակտը և հրահանգիչ դաս համարեց այդ ժողովրդի համար։

Կարճատև գործադուլով բանւորութիւնը յայտնեց միայն իր բողոքը Դումայի փակման առթիւ, ինչպէս արտայայտւել է մասնաւոր խորհրդակցութեան ժամանակ Զելնոկովը, և շուտով էլ դադարեցրեց այդ գործադուլը՝ դարձեալ ի նկատի ունենալով բոլէի պահանջը և հայրենիքի շահերը։

Պակաս վեհանձնօրէն և խելացիօրէն չարտայայտւեցին նաև այլ և այլ կազմակերպութիւնները։ Մոսկվայի քաղաքային ինքնավարութիւնը, որ առաջինը եղաւ, յանուն յաղթանակի, ժողովրդեան հաւատն ու վստահութիւնը վայելող կառավարութեան պահանջ առաջադրողների շարքում, Դումայի փակման և բանւորական գործադուլի առթիւ հետևեալ բանաձևն ընդունեց. Դուման (քաղ.) համոզւած է, որ յաղթութեան կարելի կը լինի հասնել միմիայն բոլոր ուժերի միութեամբ և անընդհատ ընդհանուր աշխատանքով յօգուտ գործի. այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է շուտափոյթ վերսկսել օրէնսդրական պալատների (Դումայի և Խորհրդի) նիստերը, և ստեղծել մի կառավարութիւն, որին կարող լինի հաւատալ ժողովուրդը։ Դուման միանում է քաղաքագլխի կոչին ուղղւած բանւորութեանը և իր կողմից կոչ է անում բոլորին յիշել, որ միմիայն ինքնազսպումի և բոլորի համերաշխ աշխատանքի մէջ է կայանում յաղթութեան գրաւականը և համաձայն ժողովրդների դէպի Ռուսաստանի լուսաւոր ապագան տանող յոյսերի իրականացումը։ Նոյն մտքով արտայայտւում են նաև Մոսկվայի նահանգական գեմստվօի ժողովում, ժողովրդական ազատութեան կենտրոնական կոմիտէտի Մոսկվայի բաժանմունքը և ուրիշները։

Այսպէս մի կողմից մեծ ցաւ է յայտնում Պետական Դումայի ժամանակաւոր փակման համար, միւս կողմից ջերմ ցանկութիւն, որ ռուս հասարակութիւնը, յանուն կուող գործի թիկունքի ուժեղացման և վերջնական յաղթութեան, շարունակի իր նախկին գործունէութիւնը, առանց վրդովւելու, առանց յուզւելու։ Ինքնազսպում, անհա թէ ինչ է լսւում չորս կողմից։ Սակայն հենց այդ մի հատիկ բառը շատ բան է ասում մեզ և ի զուր չէ, որ ռուս թերթերը դրա մէջ նկատում են և՛ կառավարութեան քայլերի քննադատութիւնը, և՛ «սև բլօկի» երևակայական կառուցւածքի ջախջախումը, և՛ այն զուգադրութիւնը քաղաքական հեռատեսութեան, թէ ով աւելի պարզ կերպով է ըմբռնում դրութեան լրջութիւնը, ում հայրենասիրութիւնն է առողջ և մաքուր։

Ն.

ՊԱՀԱՆՋԱՆԵՆՔ

Փախստականների և ծնողազուրկ որբերի պահպանութեան խնդիրը շարունակում է զբաղեցնել հայ հասարակութեան։ Ամեն կողմից յուսահատական ճիչեր ու աղաղակներ են լսւում, որ ծով կարիքին բաւարարութիւն տալ անկարելի է լինում եղած ուժերով ու նիւթական միջոցներով, որ խնամատարութեան անբաւարար կազմակերպութեան պատճառով ամեն օր հարիւրներով մեռնում են, որ մեռածների դիակներն անգամ ժամանակին անկարելի է լինում հողին յանձնել։ Ականատեսների պատմածներն ու հաղորդածները չափազանց ճնշող և սարսռեցուցիչ տպաւորութիւն են թողնում լսողի և կարդացողի վրայ, չնայած բոլորն էլ վկայում են միաբերան, որ եղած ողբալի դրութիւնն անկարելի է պատմել լեզւով կամ գրչով։ Եւ այդպիսի թշւառութեան մէջ են ապրում տասնեակ հազարներ, մի ամբողջ ժողովուրդ, այն էլ ոչ թէ օրերով, այլ շաբաթներով, ամիսներով։ Պարզ է և հասկանալի, որ եթէ հայ հասարակութիւնը չկարողանայ գէթ տանելի դրութիւն ստեղծել տնից ու վաթանից զրկւած, տարագրւած բնութեան այդ խորթ զաւակների համար, մենք ականատես և ականջալուր կը լինենք աւելի սոսկալի դէպքերի, մեր իսկ ձեռքերով ստիպւած կը լինենք գերեզման իջեցնել այն բազմահազար հայերին, որոնց ազատութեան ու ֆիզիքական գոյութիւնն ապահովելու համար տարիներով բազմաթիւ զոհեր ենք տւել և շարունակում ենք տալ։ Այժմ այդ հայութեան մի ստւար մեծամասնութիւնը մեր դուռն է եկել, ազատել է մի կերպ իր կեանքը տաճկական զօրքի, թուրք խուժանի ու քրդական հրոսակների ձեռքից և մեզնից է սպասում իր գոյութեան պահպանութիւնը։ Մի՞թէ պէտք է թողնենք, որ մեզ մօտ ևս նա նոյն վիճակին ենթարկւի, ինչ վիճակ սպասում էր նրան իր արիւնոտ վաթանում. էլ ինչո՞ւ էր փախչում հրից ու սրից, երբ այստեղ ևս սառը հողն է հիւրընկալելու նրան։

Ճիշտ է, փախստականների պահպանման խնդիրը շատ բարդ և դժւարին հարց է, ահագին զոհողութիւնների հետ կապւած, բայց և այնպէս ոչ անկարելի։ Միանգամայն իրաւացի գտնելով՝ որ ռուս կառավարութիւնը պէտք է և պարտաւոր է մեծապէս օժանդակել փախստականների պահպանման մեր երկրի սահմաններում, միանգամայն իրաւացի ենք համարում նաև օգոստոսի 31-ին Մոսկւայի հայ գաղութի ընդհանուր ժողովում երդւեալ հաւատարմատար Մամիկոնեանի արտայայտած կարծիքը, թէ չի կարող պատահել, որ այսպիսի մոմենտում փող չգտնւի։ Որտեղից էլ լինի, հայ հասարակութիւնը պարտաւոր է փող ճարել և ազատել կորստից մի ամբողջ ժողովուրդ։ Այդ պարտականութիւնից անշուշտ ազատ պէտք է համարել այն բոլոր գիւղերը, որոնք շնորհիւ այս տարւայ բնութեան հասցրած պատահարներին ու անբերրիութեան, իրենք իսկ կարօտ են դրսի օգնութեան։ Այդ հոգսը մեծ մասամբ ծանրանում է քաղաքների հայ ազգաբնակչութեան, մանաւանդ հարուստ դասի վրայ։ Բագւի փախստականների մասին հոգացող հայկական կոմիտէտը իր սեպտեմբերի 6-ի նիստում ի նկատի ունենալով փախստականների թիւը — 250.000 հոգի և օգնութեան կարօտ կովկասահայ գիւղացիներին — 150.000, եկել է այն եզրակացութեան, որ կարիք է զգացւում հաց մատակարարել 400.000 հոգու։ Հաշւելով իւրաքանչիւրին օրական 2 ֆունտ ցորեն կամ ալիւր, բոլորին պէտք է լինելու տալ օրական 20.000 փութ, ամիսը 600.000 փութ, իսկ ինն ամիսը, մինչև ամառւայ սկիզբը, 5.400.000 փութ։ Այսքանը միմիայն հաց։ Սակայն ցամաք հացով ամեն ինչ չի վերջանում. շատ ու շատ կարիքներ կան, որոնց մասին պարտաւոր ենք մտածել և հոգալ։

Վանից եկող վերջին շարանը փախստականների աւելի ևս ուժեղացնում է կարիքի չափը և պահանջում մեզնից աւելացնել մեր եռանդը և զոհաբերութիւնները, չթողնել միայնակ այդ անթիւ գործող կազմակերպութիւններին, սիրով արձագանք տալ նրանց կոչերին՝

յանուն տաճկահայ սգազգեստ ժողովրդի կեանքի պահպանման։

Նորայր

ՊԵՏՐՈԳՐԱԴԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս հաղորդում են հեռագիրները, վերջին օրերս Պետրոգրադում և Մոսկվայում բանւորական գործադուլներ են եղել և շուտով էլ դադարել։ Թէ ինչն է եղել պատճառը այդ գործադուլների, առայժմ յայտնի չէ. կցկտուր տեղեկութիւններից կարելի է եզրակացնել, որ զուտ տնտեսական հողի վրայ են եղել։ Պետրոգրադի բանւորական գործադուլի առթիւ Պետրոգրադի զինուորական շրջանի գլխաւոր կառավարիչ ինֆանտ. գեներալ Ֆրոլովը սեպտ. 2-ին հետևեալ յայտարարութիւնն է տուել.

«Պետրոգրադի՝ մի քանի ֆաբրիկաներում և գործարաններում նորից նկատուել են մասնաւոր գործադուլներ։ Բանւորները քննութեան ենթարկելով ինչ որ հարցեր ֆաբրիկաների ներսում, աշխատել են իրենց ժողովները փոխադրել փողոց։ Պարզ է, որ ժողովների ժամանակ աշխատանքները դադարում են և էլ աւելի պարզ է, որ դրանով մեր զօրքը զրկւում է ռազմամթերքների որոշ քանակից։ Մեր գլխաւոր զօրահրամանատար գեներալ-ադիւտանտ Բուզսկին՝ ռազմամթերք պատրաստող ֆաբրիկաներում ինքնակամ կերպով աշխատանք դադարեցնելը համազօր է համարում հայրենիքի դաւաճանութեան։ Հայրենիքի իսկական որդու համար այդ պարզ է։ Եթէ մենք սուր և տենդոտ կերպով ապրում ենք ռազմադաշտում տեղի ունեցող անցքեր, այդ դեռ ևս իրաւունք չի տալիս մեզ անկարգութիւն մտցնել երկրում և զօրքի պարենաւորման գործում։

Ես դիմում եմ իւրաքանչիւրի խըղճին և բոլորին միասին. կատարեցէք ձեր հասարակական պարտականութիւնները, ծառայեցէք, աշխատեցէք՝ առանց դուրս գալու ձեր գործունէութեան սահմաններից։ Մեր ուժը, մեր յաղթութիւնը թշնամու նկատմամբ մեր ընդհանուր աշխատանքի—գործի ուղիղ սիստեմի մէջն է։ Գերմանացին, արինաքամ լինելով, յաղթութիւն է որոնում Ռուսաստանի ներքին կեանքի խլրտման մէջ՝ անկարող կոտրելու մեր հերոսների քաջութիւնը։ Գերմանիան ամեն ինչ ձեռք է առել—զզւելի բամբասանքներ, լուրեր, տագնապալից տեղեկութիւններ, կաշառումներ և ստայօդ պատկերներ։ Յիշեցէք, որ ներքին խռովութեան համար թշնամու ցրած ոսկին շաղախուած է ռուսական արիւնով»։

ՀԱՅԵՐՆ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ

— Երկու օրը մի անգամ էջմիածնից ուղարկւում են գաղթականներ Գանձակի, Ալեքսանդրապոլի և այլ շրջանները։ Ներկայումս էջմիածնում կայ ոչ աւելի քան 25 հազար գաղթականութիւն։ Օգոստոսի 28-ից մինչև 31-ը մահացել են 1,284 հոգի։ Ամեն քայլափոխում կը հանդիպէք մեռելների, մանաւանդ այս վերջերս աւելացել է մեռնողների թիւը։ Որբ երեխաները գրեթէ բոլորն էլ փոխադրուած են Թիֆլիս, Դիլիջան, Բագու. էջմիածնում մնացածները հիւանդներ են, որոնց համար կայ հիւանդանոց։

— Սալմաստում գաղթականութիւնն արդէն տեղաւորուած է։ Տաճկահայ գաղթականների մի մասը վերադարձել է։ Ներսէս եպիսկոպոսը ամսիս 19-ին գնաց Բաշկալա նրանց տեղաւորելու և հարկ եղած օգնութիւնը հասցնելու։

— Մօտ օրերս էջմիածին ուղևորւեց Բագւի գաղթականական կոմիտէի կազմակերպած սանիտարական խումբը՝ բժ. Բաբալեանի ղեկավարութեամբ։ Խմբի մէջ, բացի բժշկից, մտնում են 1 ֆելդշեր 2 սանիտար, 1 գթութեան քոյր, 1 դեղագործ և 1 տեխնիկ։

— Դիլիջանից հեռագրում են. «Կիտուել են մինչև 2000 փախստականներ։ Ծայր է առել էպիդեմիան. մահացութիւնը մեծ ծաւալ է ստանում։ Խնդրում եմ շտապով ուղարկէք ֆելդշերներ, գթութեան քոյրեր, հիւանդապահներ, ախտահանողներ, 5000 կոմպլեկտ սպիտակեղէն։ Անհրաժեշտ է ախտահանութեան ենթարկել փախստականների բոլոր կայանները»։

— Սինգապուրում հրատարակւող «The Strairs Budgt» շաբաթաթերթի ապրիլի 23-ի համարում տպուած է մի տեղեկութիւն, որից երևում է Սինգապուրի ռուսական ընդհ. հիւպատոս Բոսպօպօվը հայոց հոգևոր հովւին ներկայացրել է ռուսական ծովային մինիստրութեան ղրկած մի գրութիւն։ Ռուսական ծով. մինիստրութիւնը իր այդ գրութեամբ շնորհակալութիւն է յայտնում Սինգապուրի հայ գաղութին և մասնաւորապէս նրա հովւին քրիստոնէական այն համակրելի վերաբերմունքի համար, որ սա ցոյց էր տուել այդ ափերի մօտ «Ժեմչուգ» ռազմանաւից ազատուած նաւաստիներին։ Ընդհանուր հիւպատոսը արտայայտեց իր և տեղացի ռուս համայնքի գոհունակութիւնը առ հայ գաղութը, որ միշտ պատրաստակամ քրիստոնէական հոգածութիւն է ցոյց տուել դէպ իրանց։

— Թիֆլիսի քաղաքագլուխը Պետրոգրադից Պետական Դումայի անդամ Պապաջանեանից ստացել է հետևեալ հեռագիրը. «Սանիտարական մասի գլխաւոր կառավարչի դիւանատան կարգադրութեան համաձայն՝ իշխան Վասիլչիկովը կարգադրել է արևմտեան ֆրոնտի էւակուացիայի ենթարկւած քաղաքներից տաճկահայ փախստականների կուտակման վայրերը, էջմիածին և Երևան ուղարկել 2 զինուորական հիւանդանոց, իւրաքանչիւրը 420 մահճակալով։ Դրա հետ միաժամանակ առաջարկել է Վլադիկավկազի երկաթուղու վարչութիւնը նոյն տեղն ուղարկել սննդատու կէտերի համար, 2 կոմպլեկտ զինուորական խոհանոց ծառայողների հետ միասին։ Թիֆլիսից պէտք է ուղարկւի ծառայողների մի խումբ՝ փախստականների բժշկութիւնը, պարենաւորումը և զանազան տեղեր ուղարկելը կազմակերպելու համար, որը հաւականաբար կը յանձնւի Քաղաքների Միութեանը։ Իմ խնդրանօք և սենատոր Նեյգարտի աջակցութեամբ Մեծ Իշխանուհի Տատեանա Նիկոլաևնայի կոմիտէն դրել է իմ և Պետրոգրադի Հայկական կոմիտէի տրամադրութեան տակ սանիտարական-սննդատու խմբակներ կազմակերպելու համար միանւագ 10,000 ր., և ամսական 10,000 ր.։ Տեղական գաղութի կանայք գործի են անցել։ Խմբակը այս օրերս կուղարկւի»։

— Սեպտեմբերի 3-ին երկաթուղով Դոլևար հասան 1426 հայ փախստականներ, որոնք ուղարկւած են էջմիածնից. այստեղ կը մնան միաժամանակ, հիւանդները կը ճամբւեն մօտակայ հայ գիւղերը՝ Զարդախլու 700 հոգի, Բոզա 100, Գետաբէկ 150, Զագլը 200, Բարսում 400 և Գանձակը 200։ Սեպտեմբերի 4-ին Թիֆլիսից եկած 172 հոգու մէջ հիւանդներ չկային, ուստի հաց ու թէյ տալուց յետոյ ուղարկեցին Զարդախլու։ Մեծ համախմբումներից խուսափելու համար բաց դաշտում զարկւած են վրաններ։ Զատւած են 20 հոգի հիւանդ, որոնցից 3-ը վախճանւեցին։ Քաղաքների Միութիւնը իր վրայ է վերցրել հիւանդանոցի կահաւորումը և նահանգապետի թոյլտւութեամբ իր ներկայացուցիչ է նշանակել բժ. Փիրումեանին։ Այստեղ չը կան ինտելիգենտ ույժեր, չնայած որ Գանձակը շատ մօտ է, ուր կազմւած կայ գաղթականներին օգնող կոմիտէ բաղկացած 30 հոգուց։ Գաղթականների մէջ կան որբեր։ Սպասւում է նորից 1500 հոգի։

— Դիլիջանի որբանոցում առայժմս գտնւում են փախստականների 420 որբ երեխաներ։ Դրանց մէջ մեծ թւով հիւանդներ կան, գլխաւորապէս ստամոքսային հիւանդութեամբ, իսկ կէսից աւելին բռնւած է աղիքացաւով։ Որբերի առողջութիւնը հետզհետէ դէպի լաւն է գնում շնորհիւ լաւ խնամքի և պայմանների։ Գոհունակութեան արժանի է տեղական մալականների բըռնած դիրքը դէպի որբ երեխաները։ Դրանցից ամեն մէկն էլ աշխատում է որոշ չափով օգնած լինել որբերին։ Նրանք ձրիաբար ամեն օր կաթ են բերում որբերի համար և խոստացել են որբանոցի համար հարկաւոր եղած գետնախնձորը ձրիաբար տալ։

— Փախստականների Ալեքսանդրապոլի գիւղերում տեղաւորելը վերջանում է։ Շնորհիւ անփութութեան՝ այդ գործը չկատարւեց, ինչպէս հարկն է։ Թերութիւններ շատ կան։

ԼՐԱՏՈՒ

ՌՈՒՍԻ

— Տիկ. Նատալիա Թադէոսեանն իւր հանգուցեալ ամուսնու յիշատակին պսակի փոխարէն նւիրում է 100 րուբլի յօգուտ տաճկահայ գաղթականների։

— Շաբաթ սեպտեմբերի 12-ին տեղի ունեցաւ Թեմական դպրանոցում մաղթանք դպրոցական պարապմունքներից առաջ։

ԿՈՎԿԱՍ

— Համառուսական քաղաքների միութեան Կովկասեան բաժանմունքի բիւրօն վճռել է կազմակերպել մի նոր սննդատու կէտ և ուղարկել Ջուլֆա—Խոյ—Սալմաստ ուղղութեամբ։

— Փոխարքայի դիւանատան դիրեկտոր է նշանակւում Թիֆլիզի նախկին նահանգապետ Լօզինա-Լօզինսկի, որ վերջերս վարում էր Պերմի նահանգապետի պաշտօնը։

— Երկրագործական դեպարտամենտի Կովկասեան վարչութեան ստացած տեղեկութիւնների համաձայն, այս տարի Երևանի նահանգում սպասւում է մրգի վատ բերք, իսկ հացի բերքը Հայաստանի սարահարթերում տեղ-տեղ միջակ է, տեղ-տեղ լաւ։ Զգացւում է աշխատող ձեռքերի մեծ պակասութիւն գիւղատնտեսական աշխատանքների համար։

— Բագւում ամեն օր տեղի են ունենում խոլերայի դէպքեր, բայց յամենայն դէպս մեծ ծաւալում և չափեր չի ընդունում։ Օգոստոսի 28-ին խոլերայով մեռել է 1 հոգի, 29-ին հիւանդացել են 25 հոգի, բայց ոչ ոք չի մեռել, 30-ին հիւանդացել են 20 հոգի և մեռել 2-ը, 31-ին հիւանդացել 23 հոգի և մեռել 1-ը։

ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Պետր. հեռ. գործ.)

ԳԵՐԱԳՈՅՆ ԶՕՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԲԱՆԱԿԻՑ

Սեպտ. 8-ին. Դվինսկի հիւսիս արևմտեան շրջանում, Մունչէ գիւղի մօտ, եռանդուն յարձակմամբ գերմանացիներին դուրս քշեցինք իրենց խրամատներից Դվինսկից հարաւ և հարաւ-արևմուտք։ Նովո-Ալեքսանդրովսկ—Դրիսվիատա լճի ճակատում կռիւը շարունակւում է։ Գերմանացիների ծանր թնդանօթախումբը ռմբակոծում է այս ճակատի մի քանի ճիւղամասերը՝ շատ անգամ խեղդող գազով լցրած ռումբերով։ Վիլնայի արևելեան շրջանում կռիւը շարունակւում է։ Բենեակօյ-Լիդա ճակատում և Մոլչադա գետի շրջանում (Շարի գետից արևելք) աննշան ընդհարումներ են։ Տէրէշնօ-Պօդգանցէ ճակատում, Շւպկից արևելք, թշնամին դիմում էր յարձակման, բայց յետ մղւեց, գործը հասաւ սւինային յարձակումների։ Վերցրել ենք 700 գերի և 3 գնդացիր։ Բերեզովից և Ռօստօկի գիւղերի վրայ յարձակւում գործելով՝ թշնամին, չնայած մեր ուժեղ գնդացիրային և թնդանօթային կրակին, հասաւ մինչև մեր խրամատները և յարձակւեց մեզ վրայ «ուռա» աղաղակներով, տաք սւինային կռւի հետևանքն այն եղաւ, որ թշնամին յետ մղւեց՝ մեծ կորուստներ կրելով։ Յետոյ դիմելով հակայարձակման և բռնելով թշնամու ճակատը մեր զօրքերը գրաւեցին թշնամու խրամատները։ Չդիմանալով մեր շեշտակի հարւածներին՝ աւստրիացիների մի մասը փախուստի դիմեց, մնացածները՝ ջարդւեցին կամ գերի ընկան։ Մեր վերցրած գերիների թիւն է 10 սպայ և 600 զինւոր։ Սլօնօ գիւղի շրջանում, Տրուստից հարաւ-արևմուտք, ամրութիւնը գրաւելիս վերցրինք 50 գերի, շատ փամփուշտներ և ամրութեան գործիքը։ Չերտկովից հարաւ-արևմուտք Ջուրնի գետի վրայ տեղի ունեցած ընդհարման ժամանակ թշնամին յետ շպրտւեց գետի միւս ափը. գերի ընկան թշնամուց 5 սպայ և 200 զինւոր։

—

Կովկասեան զօրաբանակի շտաբից

Սեպտ. 6-ին. — Մերձծովեան շրջանում հրացանաձգութիւն է։

Մանազկերտի ուղղութեամբ, Մաշալի և Էկրաշ գիւղերի շրջանում մեր հետախոյզներն ընդհարում են ունեցել թուրք հետախոյզների հետ։

Խմբ.-հր. Լ. Վարդապետեան

Печатать дозволено военной цензурой

Տպարան Մ. Բարաջանեանի Շուշում.